

*«Գրանցված է»*  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
16 մայիսի 2006 թ.  
Պետական գրանցման թիվ 10206150

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

12 մայիսի 2006 թ.  
ք. Երևան

N 80-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՍՐՑՈՒԹՅՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2006 թվականի մարտի 2-ի թիվ 417-Ն որոշման համաձայն.

### ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հարկադիր կատարման ընթացքում անշարժ գույքի գնահատումն  
իրականացնող լիցենզավորված անձանց ընտրության մրցույթ անցկացնող մրցութային  
հանձնաժողովի կազմը (հավելված N 1 կցվում է):

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող  
տասներորդ օրվանից:

**Դ. Հարությունյան**

Հավելված N 1

Հաստատված է

ՀՀ արդարադատության նախարարի  
2006 թվականի մայիսի 12-ի  
թիվ 80-Ն հրամանով

### Կ Ա Ջ Մ

### ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՍՐՑՈՒԹՅՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի

- Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր

նախագահ  
Հանձնաժողովի  
անդամներ

կատարող

- Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ
- Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կենտրոնական մարմնի վերահսկողության և կազմակերպական բաժնի պետ
- Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևանի քաղաքային բաժնի պետ
- Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կենտրոնական մարմնի վերահսկողության և կազմակերպական բաժնի պետի տեղակալ:

Հանձնաժողովի  
քարտուղար

*(Հավելվածը խմբ. 30.08.06 թիվ 169-Ն)*